ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/03

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ

Ռ. Մանուչարյանի (լիազորագիր՝ տրված 03.02.2021թ.),

Մ. Քարամյանի (լիազորագիր՝ տրված 03.02.2021թ.),

Ս. Ղազարյանի (լիազորագիր՝ տրված 03.02.2021թ.),

քննելով «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի կողմից 25.01.2021թ. ներկայացված (26.01.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/03 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսը (հետայսու նաև՝ Մասնակից) 25.01.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կարիքների համար սույն թվականի հունվարի 19-ին «ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթին մասնակցելու հայտ է ցանկանում ներկայացրել նաև մեր կազմակերպությունը՝ Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ն (այսուհետ՝ Կազմակերպություն): Մրցույթի բացման ժամկետ է սահմանված եղել 26.01.2021թ. ժամը 11:00: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է, որ «Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը»: Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է, որ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում: Գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»: Տվյալ դեպքում Պատվիրատուն, Մրցույթի հրավերում որպես բնութագիր է ներառել «Շապիկը՝ 4 գույն, լամինացված 250գ կավճեպատ թղթով, միջուկը՝ թղթի քաշը 70գ, սպիտակ օֆսեթ թուղթ, գրքի չափը՝ 70x90 1/16, էջերի քանակը՝ 30-550

էջ, տպաքանակը նվազագույնը 100, առավելագույնը 300 օրինակ, միավորի գինը պետք է ներկայացնել մեկ տպագրական մամուլով: (Մասնագիտական գործունեությունը ծավալելու և անխափան, օպերատիվ տպագրության համար մասնակից կազմակերպությունը պետք է ունենա.

- Երկկողմանի տպագրությամբ տպագրական մեքենա՝ 2 հատ
- Ծալող մեքենա՝ 2 հատ
- Հավաքող մեքենա՝ 1 հատ
-Մետաղակարի հնարավորությունով մեքենա՝ 1 հատ
- Թերմոսոսնձող մեքենա՝ 2 հատ
- Եռակողմ կտրող մեքենա՝ 2 հատ
- 4 գույնի տպագրական մեքենա՝ 2 հատ
- Լամինացիայի սարք՝ 1 հատ)

Պատվերը ստանալուց հետո 1-2 օրվա ժամկետում պատվերի կատարում: Տպագրվող նյութերը Պատվիրատուի կողմից տրամադրվում են էլեկտրոնային եղանակով՝ PDF ֆայլերով: Մասնակիցները պետք է նաև ներկայացնեն նման տպագրական ծառայության պայմանագրերի պատճենները նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձով»: Մասնավորապես բնութագրում հստակեցված չեն նվազագույնը հետևյալ հարցերը.

Միջուկը գրված չէ, թե ինչ գունային համադրությամբ պետք է լինի, մասնավորապես՝ սև ու սպիտակ, թե գունավոր:

Էջերի քանակը 30-550-ի դեպքում գները էականորեն տարբեր են, քանի որ տվյալ միջակայքում և՛ տպագրության եղանակն է տարբեր, և՛ տպագրության համար անհրաժեշտ կազմարարական աշխատանքներն ու կիրառվող լուծումներն են տարբեր (ամրացում ստեպլերով, թե տերմոսոսնձով, թե թելակարումով): Ծախսանյութերի քանակները շատ տարբեր են և հնարավոր չէ հստակ ներկայացնել առաջարկ նման անորոշության դեպքում:

Քանակը նշված է 100-ից 300 հատ, որը ևս խնդիր է հստակ գնային առաջարկ հաշվարկելու համար: Մասնավորապես՝ շապիկը, որը զգալի կշիռ է կազմում գնային առաջարկի մեջ հնարավոր չէ հաշվարկել նման միջակայքի համար:

Անհասկանալի է բնութագրով պահանջվող սարքավորումների տեսակներն ու հիմնավորված չեն քանակների մասին պահանջները:

Օրենսդրության, որ կետի պահանջով է, որ տվյալ ծառայությունը չի կարող իրականացնել 4 տարի 8 ամիս գործունեություն ծավալող կազմակերպությունը:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերությամբ սահմանվում է, որ «կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում»: Պատվիրատուն խախտել է նշյալ կարգավորումը և սահմանել «Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած Պատվիրատուի կողմից տպագրվող նյութը ստանալուց հետո 1-ից 2 օրվա ընթացքում»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել կատարելու «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում օրենսդրությանը համապատասխան փոփոխություններ, իսկ վերջինիս անհնարինության դեպքում՝ չկայացած հայտարարել Մրցույթը»:

Ի լրումն բողոքի՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«25.01.2021թ-ին Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ի կողմից ներկայացված բողոքի և «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի 27.01.2021թ. N ՊՏԵ-3 գրության, ցանկանում եմ հայտնել հետևյալը.

1. Միջուկը գրված չէ, թե ինչ գունային համադրությամբ պետք է լինի, մասնավորապես սև ու սպիտակ, թե գունավոր

Պատասխանում ենք. «Քանի որ մրցույթի առարկան օրենքների, օրենսգրքերի տպագրություն է և միջուկի մասին առանձնահատուկ գունային պահանջ չի դրվել, ինչպես շապիկի պարագայում, ապա միջուկի տպագրությունը պետք է լինել սև և սպիտակ»:

Դիրքորոշում. «Գնման առարկան օրենքների, օրենսգրքերի տպագրություն հանդիսանալը ոչնչով չի արգելում տեքստից բացի ֆոնային գունավորմամբ ՀՀ դրոշի կամ զինանշանի առկայությունը կամ օրինակ էջերի համ հոդվածների կամ տեքստային հատվածի առավել առանցքային հատվածները գունայնությամբ թիրախավորելը: Գնման առարկան օրենքների, օրենսգրքերի տպագրություն հանդիսանալը չի նշանակում, որ անհրաժեշտություն չկա նկարագրել միջուկի գունայնությունը՝ Ձեր կողմից հստակ չի նկարագրվել գնման առարկան միջուկի մասով, ինչը և հնարավորություն չի տալիս հստակ գնառաջարկ ներկայացնել»:

2. էջերի քանակը 30-550-ի դեպքում գները էականորեն տարբեր են, քանի որ տվյալ միջակայքում և' տպագրության եղանակն է տարբեր, և' տպագրության համար անհրաժեշտ կազմարարական աշխատանքներն ու կիրառվող լուծումներն են տարբեր (ամրացում ստեպլերով, թե տերմոսոսնձով, թե թելակարումով): Քանակները շատ տարբեր են և հնարավոր չէ հստակ ներկայացնել առաջարկ նման անորոշության դեպքում:

Պատասխանում ենք. «Ինչ վերաբերվում է էջերի քանակին, ապա հրատարակվող գրքերի էջերի քանակը էականորեն տարբերվում է իրարից (օրինակ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը՝ 35 էջ է, իսկ «Հարկային օրենսգիրքը» 532 էջ է), բացի դրանից, նույն հրատարակվող գրքի էջերը կապված դրա վրա եկող փոփոխություններից և կատարվող ինկորպորացիաներից, կարող են փոխվել: Հետևաբար, Ընկերությունը չի կարող նշել էջերի քանակ, այդ իսկ պատճառով էլ, որպես միավորի գին նշել մեկ մամուլը, ինչը չափի միավոր է տպագրական ծառայությունների համար»:

Դիրքորոշում. «Ինչպես նշել ենք տվյալ միջակայքում և' տպագրության եղանակն է տարբեր (օֆսետ թե լազերային), և' տպագրության համար անհրաժեշտ կազմարարական աշխատանքներն ու կիրառվող լուծումներն են տարբեր (ամրացում ստեպլերով, թե տերմոսոսնձով, թե թելակարումով, թե միաժամանակ և թերմոսոսնձում և թելակարում): Էջերի քանակով պայմանավորված կիրառվում է լազերային տպագրություն, կամ օֆսետ տպագրություն և փոխվում է միջուկի մեկ մամուլի տպագրության արժեքը, տվյալ միջակայքում հնարավոր չէ ստանալ կոնկրետ արժեք: Միաժամանակ այդ արժեքը չի կարող ներառել ծախսանյութերը, քանզի անհայտ է կազմարարական ինչ լուծում է կիրառվելու: Օրինակ 30 էջի դեպքում բավարար է միայն ստեպլակարը, էջերի քանակի ավելացմամբ փոփոխվում են լուծման տարբերակները և փոխվում են ոչ համամասնորեն, միգուցե կարիք առաջանա թերմոսոսնձման, իսկ մեծ քանակությամբ էջերի դեպքում

միգուցե բացի թերմոսոսնձումից նաև թելակարով ամրացվի՝ Ձեր կողմից հստակ չի նկարագրվել գնման առարկան և էջերի քանակների և տպաքանակի ու տվյալ տպաքանակի համար կիրառվող կազմարարական աշխատանքների մասով»:

3. Քանակը նշված է 100-ից 300 հատ, որը ևս խնդիր է հստակ գնային առաջարկ հաշվարկելու համար: Մասնավորապես՝ շապիկը, որը զգալի կշիռ է կազմում գնային առաջարկի մեջ հնարավոր չէ հաշվարկել նման միջակայքի համար:

Պատասխանում ենք. «Քանի որ տպաքանակի 100-ից 300 հատ լինելը կախված է տվյալ պահին շուկայում ձևավորվող պահանջարկից, (օրինակ, ընտրությունների ժամանակ «Ընտրական օրենսգրքի» տպաքանակը կարող է լինել առավելագույնից ավելի) Ընկերությունը չի կարող նշել նաև հրատարակվող իրավական ակտի տպաքանակը: Այստեղ կարող է տպաքանակի ձևավորման գործոն դառնալ նաև տվյալ իրավական ակտի վրա եկող փոփոխության հաճախականությունը»:

Դիրքորոշում. «Ինչպես նշել ենք տվյալ տպաքանակների միջակայքում և' տպագրության եղանակն է տարբեր (օֆսետ թե լազերային), և' տպագրության համար անհրաժեշտ կազմարարական աշխատանքներն ու կիրառվող լուծումներն են տարբեր, սակայն կարծում եմ կարիք չկա նշելու, որ քանզի Ձեր կողմից պահանջվել է ներկայացնել մեկ մամուլ միջուկի տպագրության արժեք, բնականաբար տպաքանակի հստակ քանակի բացակայության դեպքում շապիկի տպագրման ծախսերը հետ կապված ռիսկերը մնում է տնտեսվարողի վրա՝ 100 հատ շապիկն ու 300 հատ շապիկը միևնույն արժեք չեն կարող ունենալ»:

4. Անհասկանալի է բնութագրով պահանջվող սարքավորումների տեսակներն ու հիմնավորված չեն քանակների մասին պահանջները: Պատասխանում ենք. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից հրատարակվող իրավական ակտերի օգտատեր են հանդիսանում քաղաքացիական հասարակությունը, դատական և պետական ողջ համակարգը, ապա Մասնակից կողմը պետք է ապահոված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ինչպես նաև ռեզերվային սարքավորումներով, որոնք ֆորս-մաժորային իրավիճակներում (սարքավորումների խափանման դեպքում) արգելք չեն լինի պահանջվող ժամկետում մատուցելու ծառայությանը»:

Դիրքորոշում. «Մասնակից կողմը պետք է բնութագրին համապատասխան վերջնական սպառման առարկան պայմանագրով սահմանված կարգով հանձնի պատվիրատուին և Ձեզ չպետք է հետաքրքրի տնտեսվարողը սեփականության իրավունքով է տնօրինում

ստեպլակար անող մեքենային, թե վարձակալում է այն կամ ուղղակի ստեպլակարման ծառայությունը պատվիրում երրորդ կողմից: Անտեղի ենք համարում Ձեր գնումը կարևորելը և օրենսդրությամբ չնախատեսված ու հաշվարկներով չհիմնավորված քանակներով սարքերի առկայություն պահանջելը»:

5. Օրենսդրության, որ կետի պահանջով է, որ տվյալ ծառայությունը չի կարող իրականացնել 4 տարի 8 ամիս գործունեություն ծավալող կազմակերպությունը:

Պատասխանում ենք. «Ինչպես արդեն նշեցինք, հրատարակվող իրավական ակտերն ունեն համապետական նշանակություն, ուստի այդ աշխատանքների կատարման համար մասնակիցը պետք է ունենա անհրաժեշտ բազմամյա փորձ: Եթե բողոք ներկայացնող Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննես»-ը կարող է ապահովել տեխնիկական բնութագրի բոլոր պահանջները, Ընկերությունը կարող է ընդառաջել և մասնագիտական փորձի ժամկետ սահմանել 3 տարի: Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջներին, ապա՝ մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ խոսք չի գնում պայմանագիրը կնքելուց հետո 1-ից 2 օրվա ընթացքում, այլ ծառայության պահանջն առաջանալու դեպքում մեր կողմից տպագրվող իրավական ակտի տեքստը PDF ֆայլով տրամադրելուց հետո 1-ից 2 ընթացքում, հակառակ դեպքում 20-45 օրում տպագրելու դեպքում տվյալ իրավական ակտը կարող է կորցնել իր արդիականությունը, որի արդյունքում այն չի իրացվի և Ընկերությունը կկրի խոշոր ֆինանսական վնասներ: Սա նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջն է: Գնման հայտի տեխնիկական բնութագիրը կազմելիս, բնականաբար՝ «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունն առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Մյուս կողմից, հաշվի են առնվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2020 թվականի բերած փոփոխությունները, որոնց պահանջին և համապատասխանեցվել է առաջարկված տեխնիկական բնութագիրը: Մասնավորապես՝ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ կտը նախկին տասը օրվա փոխարեն պահանջում է՝ «3. Նախարարությունը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնի կողմից սահմանված կարգով ներկայացված նորմատիվ իրավական ակտերի միասնական կայքում հրապարակելը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի

պաշտոնական ինկորպորացիան»: Ընկերությունն այս պահանջի պաշտոնական կատարողն է, և ներկայացված Գնման հայտի տեխնիկական բնութագրի առնվազն 4-րդ և 5-րդ կետի երկրորդ մասի պայմանները թելադրված են նաև այդ պահանջները կատարելու պարտականությունից: Ձեռք բերվող տպագրական ծառայություններն այս Գնման հայտի պարագայում առանձնահատուկ են, և ոչ թե չեն ապահովում հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմաններ, կամ հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, իրականում այդ պահանջները օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Հակառակ պարագային, կոնկրետ բողոքարկողի ներկայացրած առաջկությունը, որ՝ (ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերությամբ սահմանում է, որ «կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր: Ընդ որում՝ սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում»: Պատվիրատուն խախտել է նշյալ կարգավորումը և սահմանել «Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած Պատվիրատուի կողմից տպագրվող նյութը ստանալուց հետո 1-ից 2 օրվա ընթացքում»: Կհանգեցնեն արդիականությունը կորցրած և ոչ պիտանի ապրանք ձեռք բերելուն, որը հանրությանը ներկայացնելու իրավունք մենք չունենք»:

Դիրքորոշում. «Ընդառաջելու անհրաժեշտություն չի լինի, եթե գնման գործընթացը իրականացվի գնումների օրենսդրությանը համապատասխան, միաժամանակ հայտնում ենք, որ եթե առկա են հակասություններ և անհրաժեշտություն կա որոշակի փոփոխություններ իրականացնել և Ձեր գնումների դեպքում բացառություն կազմել և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ՝ Կարգ) աշխատանքների,

ծառայությունների մատուցման ժամկետների մասով, ապա ընկերությունը կընդառաջի լիազոր մարմնին գրություն ներկայացնելու հարցում, սակայն Ձեր կողմից, որպես ժամկետների խախտման հիմնավորում նշված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ կետը միայն պահանջում է ապահովել կայքում համապատասխան հրապարակումները»:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, սակայն հրավերով «գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)» սյունյակում ներկայացված «79810000/1» CPV կոդով գնման առարկա ներառված չէ տեղեկագրում հրապարակված «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի գնումների պլանում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.02.2021թ. ժամը 10:00-ին և 08.02.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.01.2021թ. թիվ ՊՏԵ-3 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կարիքների համար սույն թվականի հունվարի 19-ին «ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Մրցույթ):

Մրցույթի տեխնիկական բնութագրի հետ կապված բողոք է ներկայացրել Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ը:

Բողոքը կազմված է 5 կետերից.

1. Միջուկը գրված չէ, թե ինչ գունային համադրությամբ պետք է լինի, մասնավորապես՝ սև ու սպիտակ, թե գունավոր:

Պատասխանում ենք. «Քանի որ մրցույթի առարկան օրենքների, օրենսգրքերի տպագրություն է, և միջուկի մասին առանձնահատուկ գունային պահանջ չի դրվել, ինչպես շապիկի պարագայում, ապա միջուկի տպագրությունը պետք է լինել սև և սպիտակ»:

2. էջերի քանակը 30-550-ի դեպքում գները էականորեն տարբեր են, քանի որ տվյալ միջակայքում և՛ տպագրության եղանակն է տարբեր, և՛ տպագրության համար անհրաժեշտ կազմարարական աշխատանքներն ու կիրառվող լուծումներն են տարբեր (ամրացում ստեպլերով, թե տերմոսոսնձով, թե թելակարումով): Ծախսանյութերի քանակները շատ տարբեր են և հնարավոր չէ հստակ ներկայացնել առաջարկ նման անորոշության դեպքում:

Պատասխանում ենք. «Ինչ վերաբերվում է էջերի քանակին, ապա հրատարակվող գրքերի էջերի քանակը էականորեն տարբերվում են իրարից (օրինակ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը՝ 35 էջ է, իսկ «Հարկային օրենսգիրքը» 532 էջ է), բացի դրանից, նույն հրատարակվող գրքի էջերը կապված դրա վրա եկող փոփոխություններից և կատարվող ինկորպորացիաներից, կարող են փոխվել: Հետևաբար, Ընկերությունը չի կարող նշել էջերի քանակ, այդ իսկ պատճառով էլ, որպես միավորի գին նշել է մեկ մամուլը, ինչը չափի միավոր է տպագրական ծառայությունների համար»:

3. Քանակը նշված է 100-ից 300 հատ, որը ևս խնդիր է հստակ գնային առաջարկ հաշվարկելու համար: Մասնավորապես շապիկը, որը զգալի կշիռ է կազմում գնային առաջարկի մեջ հնարավոր չէ հաշվարկել նման միջակայքի համար:

Պատասխանում ենք. «Քանի որ տպաքանակի 100-ից 300 հատ լինելը կախված է տվյալ պահին շուկայում ձևավորվող պահանջարկից, (օրինակ, ընտրությունների ժամանակ «Ընտրական օրենսգրքի» տպաքանակը կարող է լինել առավելագույնից ավելի) Ընկերությունը չի կարող նշել նաև յուրաքանչյուր հրատարակվող իրավական ակտի տպաքանակը: Այստեղ կարող է տպաքանակի ձևավորման գործոն դառնալ նաև տվյալ իրավական ակտի վրա եկող փոփոխության հաճախականությունը»:

4. Անհասկանալի է բնութագրով պահանջվող սարքավորումների տեսակներն ու հիմնավորված չեն քանակների մասին պահանջները:

Պատասխանում ենք. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից հրատարակվող իրավական ակտերի օգտատեր են հանդիսանում քաղաքացիական հասարակությունը, դատական և պետական ողջ համակարգը, ապա Մասնակից կողմը պետք է ապահոված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ինչպես նաև ռեզերվային սարքավորումներով, որոնք ֆորս-մաժորային իրավիճակներում (սարքավորումների խափանման դեպքում) արգելք չեն լինի պահանջվող ժամկետում մատուցելու ծառայությունը»:

5. Օրենսդրության, որ կետի պահանջով է, որ տվյալ ծառայությունը չի կարող իրականացնել 4 տարի 8 ամիս գործունեություն ծավալող կազմակերպությունը:

Պատասխանում ենք. «Ինչպես արդեն նշեցինք, հրատարակվող իրավական ակտերն ունեն համապետական նշանակություն, ուստի այդ աշխատանքների կատարման համար մասնակիցը պետք է ունենա անհրաժեշտ բազմամյա փորձ: Եթե բողոք ներկայացնող Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» կարող է ապահովել տեխնիկական բնութագրի բոլոր պահանջները, Ընկերությունը կարող է ընդառաջել և մասնագիտական փորձի ժամկետ սահմանել 3 տարի»:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջներին, ապա՝ մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ խոսք չի գնում պայմանագիրը կնքելուց հետո 1-ից 2 օրվա ընթացքում, այլ ծառայության պահանջն առաջանալու դեպքում մեր կողմից տպագրվող իրավական ակտի տեքստը PDF ֆայլով տրամադրելուց հետո 1-ից 2 օրվա ընթացքում, հակառակ դեպքում 20-45 օրում տպագրելու դեպքում տվյալ իրավական ակտը կարող է կորցնել իր արդիականությունը, որի արդյունքում այն չի իրացվի և Ընկերությունը կկրի խոշոր ֆինանսական վնասներ: Սա նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջն է:

Գնման հայտի տեխնիկական բնութագիրը կազմելիս, բնականաբար, «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունն առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Մյուս կողմից, հաշվի են առնվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2020 թվականի բերած փոփոխությունները, որոնց պահանջին և համապատասխանեցվել է առաջարկված տեխնիկական բնութագիրը: Մասնավորապես՝ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասը նախկին տասը օրվա փոխարեն պահանջում է՝ «3. Նախարարությունը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնի կողմից՝ սահմանված կարգով ներկայացված նորմատիվ իրավական ակտերի միասնական կայքում հրապարակելը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիան»: Ընկերությունն այս պահանջի պաշտոնական կատարողն է, և ներկայացված գնման հայտի տեխնիկական բնութագրի առնվազն 4-րդ և 5-րդ կետերի երկրորդ մասի պայմանները թելադրված են նաև այդ պահանջները

կատարելու պարտականությունից: Ձեռք բերվող տպագրական ծառայություններն այս գնման հայտի պարագայում առանձնահատուկ են, և ոչ թե չեն ապահովում հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմաններ, կամ՝ հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, իրականում այդ պահանջները օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Հակառակ պարագային, կոնկրետ բողոքարկողի ներկայացրած առարկությունը, որ՝ (ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերությամբ սահմանում է, որ. «Կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում»: Պատվիրատուն խախտել է նշյալ կարգավորումը և սահմանել «Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած Պատվիրատուի կողմից տպագրվող նյութը ստանալուց հետո 1-ից 2 օրվա ընթացքում»:) կհանգեցնեն արդիականությունը կորցրած և ոչ պիտանի ապրանք ձեռք բերելուն, որը հանրությանը ներկայացնելու իրավունք մենք չունենք»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.02.2021թ. ժամը 10:00-ին և 08.02.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 03.02.2021թ. ժամը 10:00-ին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կարիքների համար տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***19.01.2021թ.***:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի 25.01.2021թ. ներկայացրած բողոքը՝ լրացմամբ, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի 27.01.2021թ. թիվ ՊՏԵ-3 գրությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պարտադիր հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար

նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ <u>գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է</u>:**

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսը բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանված «79810000/1» CPV կոդով գնման առարկան ներառված չէ տեղեկագրում հրապարակված «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի գնումների պլանում:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսը ներկայացված բողոքով խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարելու օրենսդրությանը համապատասխան փոփոխություններ, իսկ վերջինիս անհնարինության դեպքում՝ չկայացած հայտարարել մրցույթը:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունները և արձանագրել, որ «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կողմից «ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, այն է՝ Ընթացակարգի շրջանակներում ձեռքբերվող գնման առարկան (հրավերով 79810000/1 CPV կոդով սահմանված) ներառված չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի 2021 թվականի գնումների պլանում: Արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջներն, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած,

հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով վիճարկվող Տեխնիկական բնութագրի իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի կողմից 25.01.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կարիքների համար տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՊՏ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**